



ԵԳԻՊՏՈՍ
Ղր.Վ.
ՏՍ.ԲԵՎՈՆ... 45
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ 25
—
ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է

ՓԻԻՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ
Ցր.
ՏՍ.ԲԵՎՈՆ... 15
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ 8
—
ԿԱՆՈՒԿ
ՏՍ.ԲԵՎՈՆ ԲՈՂ. 6



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏՍ.ԲԻ

ՇԱԲԱԹ 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1902

ԹԻԻ 36

ՄԵՐ ՊԱՏ. ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ




Կը ծանուցանեմք թէ.

1. Տօնական օրերուն ընթացքին Տեօրեկ - Խմբագրիկն անձնական սխարուքեան արգելոյժը՝ ՓԻԻՆԻԿի շաբաթ օրուան թիւը չը հրատարակուեցաւ.

2. Թերթի մը անխափան շարունակութիւնը կախում ունի ՄԻԱՅՆ բաժանորդներուն կանոնաւոր վճարումէն, սակայն, դժբաղդաբար, հակառակ թերթիկն ճակատք նշանակուած «բաժնեգիրք կանխիկ է» պայմանին, միևնչեւ ցարդ մեր արգոյ բաժանորդներուն շատերը դեռ չեն վճարած իրենց բաժանորդագիրքը: Այս առթիւ կը խնդրեմք մեր Դանիքի ցարդ չը վճարող Պատ. բաժանորդներէն որ հաճին փոքրացրել վճարումները, փոխան ընկալագրի, որ իրենց պիտի ներկայացուի:


3. Իսկ Արասահմանի մեր բաժանորդներն եթէ ՄԱՆՏԱԲՕՍԹով կասարէն իրենց վճարումը, սուանց սպասելու քրասարի վարչութեան կողմէն ներկայանալի հաւաքչին, աւելի գոն կրնեն մեզ:



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պիլեգիճի)



2

Ձարդերը. «Հայ Դրական Ծարժում»ին վերջին էջը. 4. Պոչոյ մեծ ջարդը. Նեյիսօփ.

(Շար. ԼՆ. քիւէն)

Խաչի սօնին, 1895ի Սեպտ. 30ին, Հայերը փորձեցին հաւաքաբար իրենց սրտունջները հաղորդել Սուլթանին, Բ. Դրան առջեւ Յոյցով մը, խնդրելով որ վերջ դրուի Հայաստանի մէջ անպատիժ գործուած խժողովներուն ու գործադրուի Պերլինի Դաւանագրին 61 դ յօդուածով զժուած Բարեկորդութիւնները: Դուռը Հայերուն այս արդար ու բանաւոր պահանջքին պատասխանեց սուիմի ծայրով ու հրազեններու հարուածներով. հայ արիւնը հոսեցաւ

Դրան պողոսային ու Սքանազուլի փողոցներուն մէջ: Մահմէտական մոլեռանդութեան համահարակը՝ մայրաքաղաքէն նահանգները, նահանգներէն գաւառները, գաւառներէն գաւառակներն ու գիւղերը փոխանցուած, Ջարդերը պաշտօնական ձեւ առին ու ընդհանրացան, նըլսրզէն արձակուած գաղտնի հրամաններու համաձայն:

Միեւնոյն վիրագ ու կոյր խուճանը, քալանի ու արիւնի ծարսէն մոլեզնած, յարձակեցաւ հանդարտիկ Հայերուն վրայ, որոնց ձեռքէն ժամանակին առնուած էր իրենց զէնքերը: արեան հեղեղը վազեց հայաբնակ կեդրոններուն մէկ ծայրէն միւսը, Տրապզոն, Սեբաստիա, Կեսարիա, Կարին, Բաղէ, Եդեսիա, Մարաշ, Ալեքսանդրապոլ, Տիգրանակերտ, Քարբեղ, Արաբկիր, գեղ ու քաղաք, տեղ մը չըմնաց զերծ աւարտ, սուրէ, կրակէ. ու այս բոլորը՝ քրիստոնէայ սէրութեանց աչիքն առջեւ: Կաշառուած, ամբարիտ, ստուկ ու կեղծաւոր մամուլը, Թուրքիա ու Եւրոպա, լռութիւն պահեց այս դարավերջիկ Ահռելի Ռեիքին վրայ. բայց, շուտով հասան լուրերը Պոլիս ու տարածուեցան:

Տիգրան Երկաթ, իր ազատական անգուստի հակումներուն քափովը, անպատիժ բարբարոսութեան հանդէպ կը զայրագնի, կը տառապի, կ'ընդլզէ: Ինք իր մէջ կ'սկսի ինքզինքն նեղ զգալ, երբ կը տեսնէ որ բովանդակ վաղեմի ազգ մը կը ջնջուի սպառուսպուտ, արիւնոտ ձեռքովը դժնէ Դահնապետի մը, որուն կը մեղսակցի երոպական դիւանագիտութիւնը: Կը վնուէ ուրեմն ինքզինքն նուիրել այն Դասին, որուն համար պիտի կուտէ իր գրչով. «Գրուածներու ուժանակ պիտի ըլլան» կ'ըսէր ինք: Ու այնուհետեւ ձեռք կ'առնէ ազգայնութեանց սկզբունքներու պաշտպանութիւնը, ինքզինքն վստակելով երբեմն մահու չափ:

Ընդհանուր Ջարդերէն վերջն է որ երոպական մամուլին մէջ կը շարունակէ գրել: Այսպէս, Մամուլին գահերէցը Թ.Ա.ՅՄԶ այն օրերը հրատարակեց Հնչ. Յեղ. Կուսակցութեան հրահանուր *Յայտարարութիւնը*, Երկաթին գրչէն, որ կայծակի արագութեամբ շրջան քրաւ ու քաղաքական աշխարհին ուրը դարձուց դէպ ի Հայկական Դասը: «*Ռըվիւ սէ Ռըվիւ*»-ն 1896 Օգոստ. 15ին հրատարակեց անոր «*Հայ գրական շարժումը*» յօ ուածը, որուն վերջին էջը քարզմանաբար հոս կը զետեղենք, ցոյց տալու համար թէ՛ Երկաթ ո՛րքան ազնիւ մտածողութիւններէ կը տանջուէր Մայր-Հայրենիքին համար:

«Հայ գրականութիւնը կապուած է հայ ժողովուրդին նախասագրին հետ. սեղմուած փակուած երեք միասպետական տերութեանց միջեւ, որոնք բան գործ քրած եւն խեղդել ընկերային նորոգումի ամեն գաղափար, Հայերը դեռ չ'անցուցին կոխններուն շրջանը: Երեւն պիտի տեսնէ որքերգական օրեր: Անշուշտ կառավարութիւններէն դուրս, Արեւմտեցիկն մեկ մի գաւառիկ մէջ մարդիկ կան որոնց համակրանքն ստացուած է Արիւններու յետեւ սերող ազգի մը նկատմամբ, որ օժտուած է, հիմաւորց Ասիոյ արտին մէջ քաղաքակրթութեան վառարան մ'ըջալու համար: Մեկ չը պիտի մոռնանք անոնց անունները, եւ քերտու անոնց սոսկ յիշատակը մեզ օր մը ներեշ պիտի տայ միջեւ իսկ մեր ազգային գոյութիւնն ուրացողներուն՝ որ ոսկի առին մեր արիւնին մեկ մի չափին փոխարէն: Արժուրդի ու Գաւառ Բարիպայի որդիներ, ո՛չ թէ օտարին, այլ մե՛ր իսկ մէջ պարտիկ փնտել ուժեր: Հայաստանը դեռ նոր գարնունեցաւ ջարդերով որոնց քով Սասունիներն ա՛յ բան մը չ'են, ու նիւթական կորուստներով, որոնք քաւե տարիներու աշխատանքով հազիւ կրնան դարմանուիլ: Չիւնը վեց ամիս պիտի պատէ մեռելներն ու կողոպտուած ողբերը: Այս ժամը միև է մեր պատմութեան ամենեկն աւելի անգործներէն ու ամենեկն վճռակալը: Մեկ մե՛ր վրայ անհոփոփնք: Մեկ մեկզկեկ աւելի շա՛ս սիրելով, մեկ գիրար կուրծք կուրծքի՛ սեղմելով, մեկ գլեղ կրօնով իրարմէ գա-

սողներէն ազատելով, մեր բոլոր սիսակները խոստովանելով, ուշադիր հետեւելով Եւրոպայի բոլոր գաղափարներու շարժումներուն ու մեզ պատկանող պաշարող բարբարոսներուն հոգին հետազննելով է որ, քանի՛ մեր բոլորսիք վստակներն անին, ա՛յնքան պիտի ուժը ստանանք խելոյ անոնց տիրապետելու, եւ որ մը վերջապէս զանոնք հետազննելու մեր բազուկներուն ծանրութեամբը:»

1896 Օգոստ. 26ին առաւօք, Տիգրան Երկաթ չը գիտնալով թէ այն օրը պիտի պայթէին ծանրապէս դէպքերը, որոնք ասեմէ մ'իվեր կը վախճուէին Կ. Պոլսոյ մէջ, Սամապուլի թուրք վարժարանը, կ'երթար բայց նամբան իր հայ բարեկամներէն մին իմացուց իրեն որ հայ յեղափոխականները մէկ վայրկեանէ միւսը գործելու կը պատահուէին եւ թէ, հետեւաբար, ինքզինքն սոյզ վստակ մը կ'ենթարկէր եթէ այդ մոլեռանդ մահմէտական թաղերուն մէջ ինքզինքն նետէր: Ուստի տուն վերադարձաւ ու քիչ յետոյ խառնակութիւնները պայթեցան անոելի ու արիւնոս:

Իսկ, Մարտիրոս Պիլեգիբի, Տիգրան Երկաթին կրտսեր եղբայրը, նոյն առաւօք, Օսմ. Դրամասունը գացած էր իր գրասենեակը: Անվեհեր կերպով ներկայ եղաւ Դաւենակցականներուն յարձակումին ու ի՛նքն ալ վառուած հայրենասիրական թունդ զգացումներով, վայրկեանապէս ինքզինքն տրամադրելի ըրաւ Պետերուն, որոնք թոյլ տուին իրեն որ շարադրէ ու գրէ իրենց տուն տալովը, Դրոշակեան Դամբէին Ազգագիրը, զոր Տ. Փ. Օպուանօ, Դրամասան Տնօրէնը, ստանձնեց պալատը տանել: Բաղդր բերած էր ուրեմն որ այս հրամայական գրութիւնը, որ Տէրութեանց ծանօթացուց զինուորեալ-հպարտ Հայաստան մը, տող-

ուած ըլլար Տիգրան Երկաթին եղբորը ձեռնովը:

Մարտիրոս յետոյ ինքզինքն նետեց վիրաւորուած Դաւենակցականաց գիրքը. ամեն բան ըրաւ մեղմելու համար չարչարանքը քաջամարտիկ Միսակին, որ ռումբի անոելի պայթումի մը գոհ, արիւնի մէջ կը լողար ու զինքն նանկերուն մէջը ձգող հոգեւարժին յաղթելով՝ դեռ ինք իր մէջ ուժ կը գտնէր երգելու Քամառ Քաթիպայի մարտունց երգերը, շրջապատուած իր զինակիցներէն ու Դրամասան սահմուկած պատճոհներէն, եղերական ու հանդիսատու լուրթեանը մէջսեղ Օսմ. Դրամասան, որ այդ պատմական գիշերը թաղուած ընկղմած էր աղջամուղջին մէջ:

«Այս դիւցազնային տեսարանը բացարձակօրէն արժանուշ էր ու կը թողար ուժգին տպաւորութիւն մը յարձակումէն ստակացած ու քառացած պատճոհներուն, ինչպէս նաեւ արի Դաւենակցականաց վրայ: Դրան կը հասնէր զիրար խաչածնող զնդակի հարուածներուն չարագուշակ շփոթները. նայքը ռումբերուն, որոնց միջոցով Դրոշակեան խումբեր, Դրամասան բռնաբարութիւնը բռնած, յուսահատ կռիւ մը կը մղէին, ու վայրենի ոռնումները բազմեցնէին (սօխաձի) ու արձակուած խուճապի նիշերը զոհերուն, որոնք կը թոպուէին...»

Դաւենակցականաց անձնատուրքին երբ որ իմացաւ Տիգրան Երկաթ, չը ծածկե՛ց իր սասիկ արժանութիւնը, նոյնիսկ մօրմէն ալ. «Դրամասունը մըսան հերոսներու պէս, պողոսց, բայց պէտք էր որ օղբ հանէին տեղը քան թէ թողէին այսպէս առանց արդիւնքի. եղբայրս պիտի կորսուէ՛ր հոն, ի՛նչ փոյթ: Հայաստանը պիտի պատուուած ըլլար...» Գաղափարային հայրենասիրութեան ա՛յս վայրկեանին, կասաղութենէն իր գեղեցիկ երեսները վայ-

րենացած էին ու իր աչքերուն ցոլփր կ'ըսէր թէ ամեն բանէ վեր կը դասէր ինք Մայր-Հայրենիքին շահը:

Ուրիշ պարագայի մը մէջ, յայտարարած էր թէ՛ ինք կ'ուզէր որ իր շուրջ ու ընտանիքին մէջ ամեն մարդ հայրենասէր ըլլայ ու յեղափոխական:

Յաջորդ օրը, Օգոստոս 27ին, ջարդերուն ատեն, Տ. Տը Նելիսօճ, ռուսական դեսպանը, Տիգրան Երկաթի ընտանիքին խիստ վաղեմի բարեկամներէն մին, պատօտական ձեւի սակ այցելութեան գնաց, Բերա, Տ. Կարապետ Թընկերի բնակարանը, Թուրքերուն յարգելի ընծայելու դիտարանով, ինչպէս կը կարծուի, այդ տունը: Չինք ընդունեց Տիկին Պիլէգիմի, որուն այս գաղտնի խոստովանութիւնն ըրաւ ոգիներուն առթիւ. «Հայերը շատ գէշ ըրին, այստեղ կորուսին ամբողջ աշխարհի վաստակները, զոր կը վայելէին իրենք:» Իսկ Մայրամազին մէջի վճանգըր համար. «Տիկի՛ն, յայտարարեց, այդ մասին չ'եմ կրնար զձեզ ապահովել. կացութիւնը շատ ծանր է, մենք անգամ կը գտնուինք հարուածի սակը պատճառաւ ինչ որ հայ Գոմիքներուն որով մեզի հասցուցին թշուառական նախակներ. մեր սեպիական գոյութիւնը վճանգի մէջ է:» Այս «համարաւոր նախակներ»ուն—որոնք Բերայի Դեսպանատնները յանձնուած էին եւ որոնք այնքան ուժգին սազնապ մը կ'առթէին Տէրութեանց մեծագոյն ներկայացուցիչին — հեղինակը Տիգրան Երկաթ էր, որ իր մեծ հօրը շեղազարդ կարմիր սրահին մէկ անկիւնը պահուած, անձկոտ սպասուումով մը կը չափէր Տ. Տը Նելիսօճի փառաբանական խօսքերը:

Կ. Պոլսոյ փողոցներուն ու արուարձաններուն մէջ 10,000 Հայերու կորուստ բերող այս Չարդի անուելի տեսարանը խիստ ցաւագին ազդեցու-

թիւն մ'ունեցաւ Տիգրանի գորովոտ հոգիին վրայ, որ սակայն երբէք չը թուցաւ ու չը վհասեցաւ. ընդհակառակն, անելի ուժով մը փարեցաւ իր ազգային դերին: Գիտնալով հանդերձ թէ՛ իր յեղափոխական արարներուն ամենափոքրիկ մասնութիւնը պիտի զինք անմիջապէս կախաղանի դասապարտէր.

— «Եթէ հիմայ ես ձերբակալուիմ, մահուան դասապարտուիլս անխուսափելի է.», որ մը, մեծ անձկութեան բուռով մը խոստովանեցաւ — ուզեց դարձեալ արձանակել սարսափի ու անյուսութեան այս օրերուն մէջ իր հպարտ ու յանդուգն փառաբանական խաղը: Այս մասին գաղափար մը պիտի շինուի, եթէ կարգանք այն բուռն Յայտարարութիւնը, զոր ուղղեց Քրանսական դեսպան Տ. Բ. Գամպոնի, 1896 Սեպտ. 7ին — եղերական դէպքէն 10 օր ետքը —: Տիգրան Երկաթին այս գրուածը, զոր «Փիւնիկ»ը Հայ Ազգին կը յանձնէ, «անկոպ» է: Հոն պիտի գտնենք Պետական Մարդու ձիրքերը Տիգրան Երկաթին, որուն առնացի կորովի շեշտով, խանդաւորած ու անպիտան լեզուն՝ մեզի պիտի մասնանի ընէ աստիճանը մեր արդի մեծ Հերոսին յեղափոխական յղացումներուն:

Ս. ԲԻԻՐԱՏ

ՈՐՔՆԵՐՈՒՆ ԶԱՄԱՐ


ԲԻՈՒՍԱՆ, արդէն մեզի ծանօթ իր բանաստեղծի ձիրքով, ու Ն. Բ. Խիլիէն, մեղուի մը մէջ ստացած արծաթ շքանշանով, որ կ'աւելցնէ հրատարակութեան: Այս առթիւ կը հրատարակենք նոյնին ՈՐՔԸ վերնագրով երկար ոտանաւորին առաջին եւ վերջին տուները.

Ան երբ սնակին մէկ անկիւնն աշխարհ
եկաւ ձիջերով,
Հնոսիներ ծակուծուկ եղան անոր խան-
ձարուր.
Չխառն հօրն աչքին դիմ կարկրող սեր ու
գորով,

Զերան սեեղ բուսերուն մօրը շեջով կը
ջեռնուր,
Ան երբ սնակին մեկ անկիւնն աշխարհ
եկաւ ճիչերով:

Հիւնայ կ'աճի ան, մըռայլ վրեժն ալ կ'աճի
ահաւոր,
Արդարութիւնը՝ կայծակ, փայլակն անոր
արսին մեջ,
Դիակներու դաշտերէն վերընձիւղած ան
զինուոր,
Հրացանն ուսին կը վառէ հայրենիքի ճր-
րագը շեջ,
Հիւնայ կ'աճի ան, մըռայլ վրեժն ալ կ'աճի
ահաւոր:

ՈՐԲԵՐՈՒՆ ԱՂԱՂԱԿԸ



Կեանքերնիս՝ ծով պղկոծ,
Ու արտերնիս՝ խորունկ խոց,
Մեկն, անպաշտպան հայ որբեր՝
Ուղղած ձեզի մեր աչքեր,
Արտասոււարոր, լըռելէսայն՝
Կ'պատեմք ձեր օգնութեան.
Հա՛յ, Հայրենի՛ սարսքեան,
Յիշեցե՛ք մեզ, մի՛ մոռնաք:

Դիտե՛ք դուք, բայց չ'սեսա՛ք.
Մեր թշնամին երուզակ՝
Ձեզի եղբայր հայրերնուս
Արեւաթ ներկեց հող, քար, բոյս.
Ու մայրերնիս, ձեզի՛ փոյ,
Հարեմին զա՛րդ զրաւ, բո՛յր.
Բնակարաննիս կըրակի,
Մեզ թշուառացուց կրկնակի:

Ուր՝ ծերադիր, թեւաբաց,
Կը պաշտէինք մեկն Աստուած,
Սրբաստղին այն, — երբ
Թաշան առին անհրդեհ, —
Մզկիթ դարձաւ. արդէն հո՛ն.
Լռեցին ֆրշոց, երգիւն,
Սուրբ երգիքէն, դեկպետին
Չայնն ալ խոցեց մեր հոգին:
Ինչե՛ր, ինչե՛ր ըրին դեռ,

Հայուն անգէն ու անտէր,
Մահունկն անգաւ ճորտիկն
Մօրը կարէն գրկեցին.
Իրենց եղե՛նը այնքան
Դէր սեպիկն բաւական.
Անոնք անգո՛ւր եւ կարի,
Ու մեր թիւը կ'ստուարի:


Երկիւնք, արդար դասաւոր,
Ե՛րբ իր վճիռն ահաւոր,
Ե՛րբ սայ պիտի. վերէն վար
Թափէ ծրծոււթ հըրաւսոյ,
Նոր Սողոմոն Գոմարին
Չարակներն ե՛րբ պիտի՝ մոխրին.
Ազատութիւնն՝ հովանի
Մեզի, պիտի՝ ե՛րբ սաւառնի:

Հեծեր, ճիչեր մեր երկրէն
Բընաւ պիտի չ'ընե՛ն.
Ի՛նչ բարեբուն ժամանակ,
Հայն պիտի՝ մորթե՛ն շարունակ,
Ա՛յ մեր բերնէն ակաւայ,
Օրհնակներն սեղ, հիւնայ
Նախասիւններ կը թըռին,
Անե՛ծք, հաշի Աշխարհին:

Կեղծիքի բոյն է թէ այն,
Ու երկիւնք դեռ լուռ միայն,
Մեր աղաղակը գեթ դուք
Մի հաւարեք ինչ սաղսուկ.
Թե՛ր ու թիկունք, ձեզմէ գաս,
Չ'ունիքն, ձե՛րն եւս հարագաս,
Հա՛յ, Հայրենի՛ սարսքեան,
Հոգ մեզի մի՛ զըրանաք:

6 Յունուար 1902 ԲԻՌԻՍԱՆ
Աղեփասնորիս

ՔՐՈՆԻԿ



Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

— ՕՐ. ՍՕՅԻ ՄԱՆԻՍԱՂԵԱՆ, ամիս-
ներէ ի վեր տունը փառուած, ամսոյս 10

ին ուրբաթ օրուան Գաւառ, Ընդհ. Ժո-
ղովի նստին մէջ, որ տեղի ունեցաւ
Վսեմ. Տիգրան բաւայի նախագահու-
թեան տակ, ի բացակայութեան Սրբ.
Առաջնորդին, Պատկ. երեսփոխանաց մի-
ահամուռ որոշումովը, եւ հակառակ
վարժարանին հոգաբարձութեան կող-
մէն մասնուցուած գանգասագրին, վե-
րահաստատուեցաւ իր նախկին պատ-
նին մէջ անգեղջ թոշակով, Աղջ. Վար-
ժարանին աւագ ուսուցչուհիի հանգա-
մանով:

Այս իրողութիւնը յաղթանակ մը
կը նկատենք մենք արդարութեան ու կը
փափագինք որ միանգամ ընդ միտ
փակուած ըլլայ այդ հարցը, գոր յա-
րուցած էին երկու տղայ հոգաբարձու-
ներ, իրենց անփորձ ու քիչ մ'ալ
գճումն նկատուներէն թելադրուած:

Տեղն է հոս յիշել թէ՛ Փիփիկի
նախորդ թիւին մէջ հրատարակուած
ԿԱՅԾՓԱՐԻ թղթակցութիւնը՝ մաղձը ոտ
հանած է մեր բաժանորդներէն ոմանց,
որոնք, եթէ խմբագրութեան կողմէն
գոհացում մը չ'ստանան, թերթը պիտի
մերժեն եղեր...: Ասի մեզի մտահոգու-
թիւն առթելէ հետի՛ բնաւ չը կրնար
փոփոխել «Փիփիկ» ի ուղղութիւնը:
Խմբագրութիւնը չը փափագիր ունենալ
խաթեր համար բաժանորդներ, ու
կ'արհամարհէ իրենցմէ գալիք *քե-
րամէթը*:

Նշանակենք միայն թէ՛ այդ որակի
մարդիկը՝ պատրաստելու ելեր են մեր
սերունդը: Արուեստակից մը սիրել ու
պատշտանել՝ նուիրական է, բայց ա-
ւելի նուիրական չէ՞ հումարսութեան
համար հալածուիլը:

— ՏԱՄՆԱՄԵԱԿ ՄԸ. — Ռուսնուզի
Հայկական ընթերցարանի հաստատու-
թեան աստամտակին առթիւ հանդէս
մը կազմակերպելու համար Կարգա-
դիր Մասնախումբ մը կազմուած է:
Ասեմապետ Տիար Գ. Սարաճեանի ու

Ասեմադպիր Տիար Թ. Սուփասեանի ստ-
րագրութեամբ Շրջաբերական նամակ
մ'ստացանք երեք օր առաջ, աւետող թէ՛
այդ հանդէսը տեղի պիտի ունենայ Յուն-
վար 6ին: Ինչպէս կը տեսնուի, շատ ուշ
հասած է մեզի Պատ. Մասնախումբին
նամակը. սակայն, ասիկայ պատճառ
մը չէ՛ որ խմբագրութիւնս չը հրաիրէ
Ռուսնուզի ընթերցասէր հասարակու-
թեան ուշադրութիւնը յիշեալ ազգօգոս
հաստատութեան վրայ, որուն քարտ-
ուան անխափան գոյութիւնը գրաւա-
կան մ'է արդէն նոյն քաղաքին հայ գաղ-
թականութեան կենտունակութեանը.
կը մնայ ուրեմն այսուհետեւ ջանալ
կանգուն եւ աւելի բարգաւառ պահել
հայկ. ընթերցարանը, ինչ որ կը պա-
հանջէ նիւթական աջակցութիւն անխը-
սիր ամեն կարգի անհասներու կողմէ:
Ո՞վ կրնայ այսօր ուրանալ թէ՛ ընթեր-
ցարաններուն մէ՛ջ կը կրթուի, կը ձուլ-
ուի ու կը կազմակերպուի ներկայ սե-
րունդը. ժողովուրդին Դպրո՛ցն է այն/
հետեւաբար ժողովուրդը պարտի զայն
ապրեցնել միտ: — Ահա՛ Տասնամեակ
մը, որ Ռուսնուզի ընթերցասէր հասա-
րակութեան իրաւացի փառասիրու-
թիւնն արթնցնելու բնոյթն ունի:

Մեր անկեղծ խնդակցութիւններն ու
բարեմաղթութիւնները կանխելով նոյն
մտաւորական կառոյցին յաջողութեանը
համար, վերջացնենք շրջաբերական նա-
մակին հետեւեալ տղերովը.

«Այս բարեպատեն առթիւ, Կարգա-
դիր Մասնախումբս հրաւէր կը կարգայ
բոլոր Արգոյ Հեղինակներուն, Խմբա-
գիրներուն, Հրատարակիչներուն, Գրա-
վանաւորներուն եւ Կրթասէր Ազգայիննե-
րուն, որ բարեհաճին նիւթապէս եւ բա-
րոյնապէս սասարել «Ռուսնուզի Հայ-
կական Ընթերցարան»ին, որով կարելի
ըլլայ անվհաս յարատեւել աւելի բար-
գաւառ վրնակի մը մէջ եւ լիակատար

գոհացում սալ Քաղաքիս ընթերցանէր
Հայ հասարակութեան:

Հասցէ

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ —

ՌՈՒՍՃՈՒՔ

Իսկ դրահական նուերները իրկելոյ

Տ. ՎԱՂԱՐՇԱԿ ԴՈՒՅՈՒՄՃԱՆՆԻ

ՍՐԲ. ԱՌԱՋՆՈՐԴԻՆ հիւանդութիւնը լուրջ երկիւղներ առթելու օրջանն անցուցած է կ'ըսեն տեղական օտար թերթերը, որոնցմէ կը քաղենք մեր Առաջնորդարանէն հաղորդուած տեղեկութիւնները:

ԿԱՐՆՈՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐՈՒՆ համար առ բարեւէր ազգայինս ուղղեալ ԿՈՉԸ մենք ստացած չ'ըլլալով բնականաբար հրատարակել չէինք կրնար. սակայն, բաղձալի է որ լայնօրէն ըմբռնուի նայինք կարեւորութիւնն ու ջերմ ընդունելութիւն գտնէ եգիպտահայ հասարակութեան կողմէն:

Այն ձիւնապատ սարահարթին վրայ, ձիւնին սակ ու բուրբն դէմ, արկածեալներուն ահռելի կացութիւնն անկարագրելի է. վայրկեանէ վայրկեան օգնութիւն կ'սպասեն մեր այն տարաբաղ հայրենակիցները, որոնց, մեր խեղճ որբերուն իրատունքին չ'դպչելով, կրնանք, եթէ ուզենք, առատօրէն օգնել:

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԶՅ. ՅԱԿՈՎՔԵՍՆ, Ս. Պօղոս Պետրոսի աւագ-երիցութեան հանգամանքովը նախագահեց Ընտրական Ժողովին Ա. նիստին, որ տեղի ունեցաւ ամսոյս 22 ին չորեքօրեայ իրիկունը, ՚ի ներկայութեան անդամներուն մեծ մասին, որոնցմէ Վսեն. Պօղոս բաւա նուպար, Երուանդ պէյ Աղաբօն, Տեաբ Կրպ. Մելիքեան ու Պերն Օհանեան բացակայ էին. իսկ Տիար Ալեքսան ձեւակիրեան հրաժարած է. Յիշեալ նիստին մեջ պատաստեցաւ նոր Թաղ. Խորհուրդի ընտրելի անդամոց եռապատիկ անուններուն ցանկը, որ այս շաբաթ եկեղեցիին

պատէն պիտի կատուի:

ՏԻԱՐ ՄԻՀՐԱՆ ԹԵՂԵԱՆ, վկայեալ իրաւագէտը, որ արդէն ծանօթ ու համակրելի դէմք մ'է տեղիս հայ հասարակութեան մէջ, ամսոյս 21ին երեքօրեայ օրուան Մեսածրիով ժամանեց քաղաքս. ուր կ'իմանանք ուրախութեամբ թէ պիտի հաստատուի:

ԽՆԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ. Խմբագրութիւնս իր մասնաւոր խնդակցութիւնները կը յայտնէ

1. Արժ. Տ. Յարութիւն Քհյ. Յակովբեանի, որ Սրբ. Առաջնորդին ներկայ 5 ամսաթիւ պատճառագրովը հաստատեցաւ Աւագ-Երէց քաղաքիս Ս. Պօղոս Պետրոս եկեղեցիին.

2. Տիար Մ. Զրախեանի ընդ Օր. Վ. Թիրապի նշանախօսութեան առթիւ. որ անցեալ շաբթուան մէջ տեղի ունեցաւ.

Տիար Մ. Զրախեան Տեղիս Ազգ. Վարժարանէն հրաժարած ուսուցիչներէն, այժմ պատճառեալ Հանրօգուտ Շինութեանց նախարարութեան մէջ, ազնիւ ու ապագայ խոստացող երիտասարդ մ'է:

Իսկ Օր. Վերգիւնէ Թիրապ, աղջիկն է մեկնագէտ երկրագործ Տիար Մեպուհ Թիրապեանի, որ Տայիրայի Սանիայի մէջ կարեւոր պատճով մ'ունի ի Միւնիլէ: Խօսեցեալ օրիորդը տպար Հայունի մ'է, օժտուած ընտիր ձիրենով ու դաստիարակութեամբ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

— ՖՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ Մէջ ամսոյս 21ին արտաքին գործերու պիւսնէին վիճաբանութեան առթիւ Տ. Տէլգաւէ ըսաւ որ Միտիլիի նաւառայրը նպասակ ունեցաւ պատճառներու մեր չը յարգուած շահեր. Գոհացում ստացանք առանց դպչելու ուրիշ իրատունքներուն. իսկ Միտիլի չը մնալով՝ արդարացուցիւք աշխարհի վստահութիւնը մեր վրայ: Խօսեցաւ նաեւ այն ազդեցիկ դիրքին վրայ, զոր Ֆրանսան բռնած է ի Թուրքիա, ուր իր գլխաւոր ձեռնարկները, Ֆրանսական դպրոցները, որոնք պահպանած են Ֆրանսական ազդեցութիւնը, մեծամեծ յառաջդիմութիւններ իրագործած են:

«ԱՐԱՔՍ»

Հայկական Տպարանը թէ՛
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն
տեսակ տպագրական գործեր
կը կատարէ մեծ խնամով եւ
լինջ ոչ նուազ կարեւոր չէ

Խիս յախառն գիներով:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Միաց. Նահանգներուն Ռու-
տըր քաղքէն Հայրենակից մը
մտադիր ըլլալով Հայերէնի
թարգմանել տալ արաբերէն
գիրք մը, կը փնտռէ այդ եր-
կու լեզուներուն հաւասարա-
պէս հմուտ եղող անձ մը, ո-
րուն թարգմանչութիւնը բնա-

կանաբար սլիտի վարձատրուի:
Դիմել Փիլիսիկի խմբագրա-
տունը. նամակ ղրկել թերթիս
հասցէին՝

S. Burat, Rédaction Punig,
Alexandrie (Egypte)

Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐԲ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉԲ
Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսելի հայ տուներուն
ծանօթ յանախորդ, կը պատրաստեն
գոհացուցիչ պայմաններով ամեն տե-
սակ կահեղէններ, վարագոյր, եւն.
Յանձնարարութիւնք խնամով կը
կատարուին:

Դիմել, Աղղարիկ, Ռիւել-էլ-Չահասի,
Attarine Ruelle-el - Zababy

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուն ընդդէմ հրդեհի ինչպէս
նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխագրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսգոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱՆԱՆ

Աղեփասնորիս, պզտիկ Մեկնիէ Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ըն-
կերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ